



ՊՐՈՖԵՍՈՐ ԱՇՈՏ ԳԱՐԵԳԻՆԻ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ



Լրացավ «Էջմիածին» ամսագրի 1950—1955 թթ. խմբագիր, Գերագույն հոգևոր խորհրդի գիտական քարտուղար և հոգևոր ճեմարանում հայ ժողովրդի պատմության, հնագիտության և աղբյուրագիտության դասախոս, անվանի պատմաբան, գիտության վաստակավոր գործիչ, պրոֆ. Աշոտ Գարեգինի Աքրահամյանի ծննդյան 70 և գիտամեկավարժական գործունեության 40-ամյակը:

Պրոֆ. Ա. Գ. Աքրահամյանը ծնվել է 1903 թվականին Ագիզքենկովի շրջանի Կեչուտ գյուղում, հայ քահանայի ընտանիքում:

Նախնական կրթությունը ստացել է Նա-

խիջևանի հայկական դպրոցում և ապա իր ուսումը շարունակել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որից հետո Եվրոպեյ է իր ժողովրդի հոգևոր և կրթական ծառայության գործին:

1930 թվականին Ա. Աքրահամյանը ընդունվել է Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմա-տնտեսագիտական ֆակուլտետ: Այնուհետև, ավարտելով ասպիրանտուրան, դիսերտացիա է պաշտպանել և աշխատանքի անցել ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանում, ուր հանգամանորեն զբաղվել է հիմնականում Անահիտ Եփրակացու գիտական, մաթեմատիկական և մատենագրական վաստակի ուսումնասիրությամբ և հրատարակությամբ, որի համար էլ նրան շնորհվել է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Պրոֆ. Ա. Աքրահամյանը հաջորդ տարիներին ևս շարունակել է իր քեղմնավոր պատմա-բանասիրական հետազոտությունները՝ հարստացնելով հայ մշակույթի գանձարանն արժեքավոր ուսումնասիրություններով:

1944—1956 թվականներին պրոֆ. Ա. Աքրահամյանը Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում, իր մանկավարժական, գիտական-պատմա-բանասիրական գործունեությանը զուգահեռ, շնորհալի աշխատանքներ է կատարել նաև Մայր Աթոռում՝ որպես Գերագույն հոգևոր խորհրդի գիտական քարտուղար, «Էջմիածին» ամսագրի խմբագիր և դասախոս հոգևոր ճեմարանի:

«Էջմիածին» ամսագրում էլ պրոֆ. Ա. Աքրահամյանը, տպագրել է նաև քազում արժեքավոր ուսումնասիրություններ՝ պատմագիտական և հայագիտական բովանդակությամբ (տես՝ «Պրոֆ. Ա. Գ. Աքրահամյանի տպագիր աշխատությունների մատենագիտություն», 1974, էջ 8—21):

Սակայն մատենագիտական այս ցանկի 14-21 էջերում թյուրիմացաբար պրոֆ. Ա. Աբրահամյանին են վերագրվել 1932-1950 թվականների «Էջմիածին» ամսագրի մի շարք խմբագրականներ (այս մասին տես ««Էջմիածին» ամսագրի մատենագիտություն», «Էջմիածին» ամսագիր, 1973, №№ Ը-ԺԱ)։

Մայր Աթոռում իր աշխատակցության տարիներին, 1944-1955 թվականներին, պրոֆ. Ա. Աբրահամյանը քանիցս Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից գործուղվել է արտասահման՝ Իրան, Իրաք, Սիրիա, Լիբանան, Պաղեստին, Եգիպտոս՝ այցելելով մեր եկեղեցական թեմերն ու համայնքները ամրապնդելու համար Էջմիածին-հայրենիք-ախյոռք եկեղեցական-հայրենասիրական կապերը։

1958 թվականից սկսած պրոֆ. Ա. Աբրահամյանն անբողջապես միջուկվել է գիտական, պատմա-քանասիրական և մանկավարժական աշխատանքներին, մանավանդ Երևանի պետական համալսարանի հնագիտության, աղբյուրագիտության և ազգագրության ամբիոնում՝ որպես մասնագետ հայ ժողովրդի պատմության և քաջամուտ հայագետ։

Պրոֆ. Ա. Աբրահամյանի ծննդյան 70 և գիտա-մանկավարժական գործունեության 40-ամյակի առիթով, հանուն Մայր Աթոռի, Վեհափառ Հայրապետը բարեհաճել է

շնորհավորել նրան և ողբել մեանյալ մեռագիրը։

ՎԵՀԱՓԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Սրտանց շնորհավորում ենք ձեր յթա-նասունամյա հոբելյանը և ողջունում երկար տարիների ձեր գիտական վաստակը իբրև հմուտ պատմաբան, բանասեր և մանկավարժ։

Այս երջանիկ առիթով արժան ենք հաճառում զնահատանքով հիշատակել ավելի քան տասը տարիների ձեր բազմակողմանի, օգտաշատ աշխատանքը Մայր Աթոռ սուրբ Էջմիածնում, որը մի կարևոր նպաստ հանդիսացավ մեր եկեղեցու պատմության բախտորոշ մի շրջանի համար։

Հարգարժան ուսուցչապետ, ընդունեցեք Մեր անկեղծ ու ջերմ մաղթանքը արևա-տության, որպեսզի դեռևս բազում տարի-ներ շարունակեք ծառայել մեր վերածնված հայրենիքի գիտության և ուսումնասնեցնոր սերունդներին։

Սուրբ Էջմիածնից օրհնություն ձեր կյան-քին ու վաստակին և ձեր ընտանիքին։

Վ Ա Ջ Գ Ե Ն Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՅՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

8-ը փետրվարի 1974 թ.,
Մայր Աթոռ ս. Էջմիածին

